# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

## Ֆիոլետովո համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Ֆիոլետովո** | Ավագանու արտահերթ նիստ | 19.02.2026թ. | 11:00 | **Ֆիոլետովո** համայնքի ղեկավարի աշխատասենյակում (գ.Ֆիոլետովո, 1 փ.146) |

**ՕՐԱԿԱՐԳ**

2026թ. փետրվարի 19-ին, ժամը 11.00-ին, Ֆիոլետովո համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք ավագանու արտահերթ նիստի

**ժամը՝ 11.00**

1. Ֆիոլետովո համայնքի 2026 թվականի հունվարի 19-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

Զեկ. Ա.Աբրահամյան

2. Փողոցի անվանակոչության մասին

Զեկ. Կ. Սարդարյան

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և հողամասում Արտակ Բաղալյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունները ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկ. Կ. Սարդարյան

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2026 թվականի N 07

## ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 Թ._Ի ՓԵՏՐՎԱՐԻ 19_Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Ֆիոլետովո համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի ավագանու 2026թ-ի հունվարի 16-ի թիվ 01 արտահերթ նիստի օրակարգը.

Օրակարգ.

1. Ֆիոլետովո համայնքի 2026 թվականի փետրվարի 19-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Փողոցի անվանակոչության մասին
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և հողամասում Արտակ Բաղալյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունները ուղղակի վաճառքով օտարելու մասին

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՉԻՉՅՈՎ**

Նախագիծը պատրաստեց Համայնքի ղեկավար Ա. Չիչյովը

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2026 թվականի N 08

### ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ ,12-րդ կետերով, Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում գտնվող բնակավայրի փողոցն անվանակոչել՝ Ֆիոլետովո, 1-ին փողոց՝ համաձայն կից քարտեզի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՉԻՉՅՈՎ**

Նախագիծը պատրաստեց Առաջին կարգի մասնագետ Կ. Սարդարյան ը

Քարտեզի դիտում



**ՆԱԽԱԳԻԾ**

# ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ու Մ

2026 թվականի N 09

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ և ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՐՏԱԿ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Արտակ Բադալյանի (ծնված 11.11.1965թ.) դիմումը,՝ ինքնակամ կառույցի օրինականացման մասին, հաշվի առնելով վերջինիս համաձայնությունը՝ գնման նախապատվության իրավունքով Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքում գտնվող 06-113-0144-0002 ծածկագրով 0,09957 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանանակության հողամասը, 29.98 քմ չափերով բնակելի տունը, 17.89 քմ չափերով խոհանոցը և 2.61 քմ և 1.23 քմ մակերեսով պարիսպները գնելու մասին, ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և հողամասում Արտակ Բադալյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունները ուղղակի վաճառքով Արտակ Բադալյանին օտարելուն

2.Հողամասի վաճառքի գին սահմանել 788600 ՀՀ դրամ (յոթ հարյուր ութսունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

3. Ինքնակամ կառույցների օրինականացման գին սահմանել 243000 (երկու հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՉԻՉՅՈՎ**

Նախագիծը պատրաստեց Առաջին կարգի մասնագետ Կ. Սարդարյան ը